

«Հորիզոն-2020»-ը՝ զարգացման հեռանկար



Հայաստանն ինտեգրվում է եվրոպական գիտական հանրությանը

Համաշխարհային գիտության զարգացման համար կարևորագույն ծրագրերից է Եվրոպական միության գիտական հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացման ութերորդ շրջանակային ծրագիրը՝ «Հորիզոն-2020»-ը: Այն ֆինանսավորվում է ԵՄ կողմից, մեկնարկել է 2014թ. և կավարտվի 2020թ.: «Հորիզոն-2020»-ը ԵՄ պատմության մեջ խոշորագույն շրջանակային ծրագիրն է, որի բյուջեն կազմում է 80 մլրդ եվրո: 2016թ. մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագրով խոշորագույն գիտահետազոտական այս ծրագրին է միացել նաև Հայաստանը:

Ծրագրին մեր երկրի մասնակցության հեռանկարների մասին երեկ ասուլիսում խոսեց գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նա նշեց, որ «Հորիզոն-2020»-ին Հայաստանի մասնակցության համաձայնագրի ստորագրմամբ հայկական գիտության առջև լայն հնարավորություններ են բացվում՝ թույլ տալով իրականացնել բազմաթիվ ծրագրեր և հետազոտություններ: Այսպես, ծրագրի միջոցով ֆինանսավորվելու են գիտական հետազոտությունների, էներգետիկայի, արդյունաբերության, նորարարության, նոր տեխնոլոգիաների, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության խթանման բնագավառների հայտեր:

«Ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության համաձայնագրի կնքման բանակցությունները սկսվել էին 2013 թվականի հուլիսից: և եթե մինչ այժմ Հայաստանը մասնակցել է «Հորիզոն-2020»-ին միայն երրորդ երկրների շարքում, այսինքն՝ հայաստանյան իրավաբանական և ֆիզիկական անձինք չեն օգտվել ծրագրի մի շարք կարևոր բաղադրիչներից, ապա համաձայնագրի շնորհիվ ՀՀ հետազոտական ինստիտուտները, համալսարաններն ու անհատ հետազոտողները կկարողանան օգտվել բոլոր հնարավորություններից ամենատարբեր ոլորտներում՝ հիմնարար գիտական բնագավառից մինչև ցուցադրական նախագծեր՝ ԵՄ անդամ պետությունների և ծրագրին ասոցացված գործընկեր մյուս երկրների կազմակերպությունների համար նախատեսված պայմաններով»,- շեշտեց Ս. Հարությունյանը:

Խոշորագույն գիտական այս ծրագրին մեր երկրի ասոցացումը հնարավորություն կտա հանրապետության գիտական կազմակերպություններին, բուհերին, ինչպես նաև անհատ գիտնականներին ու ասպիրանտներին մասնակցել գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակին համապատասխանող ամենատառջնակարգ ու կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, խոշորամասշտաբ միջազգային գիտական համագործակցություններին, ինչպես նաև օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից: Գիտության պետական կոմիտեի նախագահի խոսքով, այն թույլ կտա բարձրացնել Հայաստանի գիտական ոլորտի տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման եվրոպական ծրագրերում, ավելացնել հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները. «Համաձայնագրով, փաստացի, հայկական գիտությունն ասոցացվում է եվրոպական գիտական հանրությանը: Դրա շրջանակում հայաստանյան կազմակերպությունները այսուհետև կկարողանան նախաձեռնել և նույնիսկ համակարգել եվրոպական հետազոտական խորհրդի դրամաշնորհային ծրագրերը: Ծրագրին մասնակցելու տարեկան անդամավճարը կազմում է 5 մլն եվրո, սակայն բանակցությունների արդյունքում Հայաստանը ստացել է 87 տոկոսի գեղչ և տարեկան վճարելու է միայն 450 հազար եվրո: Համոզված եղեք, որ այս գումարն առաջիկա 1-2 տարիների ընթացքում մի քանի անգամ ավելի հետ է վերադառնալու»:

Ս. Հարությունյանը շեշտեց, որ Եվրամիությունը գիտության ոլորտում Հայաստանի առաջնային գործընկերն է, որին հաջորդում են ԱՄՆ-ն ու Ռուսաստանը: Հետևաբար ոչ մի տարօրինակ բան չկա նրանում, որ Հայաստանը, տնտեսական առումով լինելով ԵԱՏՄ անդամ, գիտության ոլորտում ինտեգրվում է եվրամիության գիտական հանրությանը՝ կնքելով «Հորիզոն-2020»-ին միանալու համաձայնագիրը. «Գիտությունն այն ոլորտն է, որն ամենից շատն է ինտեգրվում համաշխարհային գիտական հանրությանը: Գիտությունը բաց համակարգ է, նրա համար տնտեսական տարբեր միությունների սահմաններ գոյություն չունեն: Նույնիսկ խորհրդային տարիներին հայկական գիտությունը միշտ էլ ինտեգրված է եղել եվրոպական, ամերիկյան գիտական հանրությանը: Հետևաբար տարօրինակ չէ լինել տնտեսական մեկ տարածքում՝ գիտության ոլորտում առավելություն տալով մեկ այլ տարածքի: Ոչ ոք չի կարող արգելել Հայաստանին համատեղ գիտական ծրագրեր իրականացնել աշխարհի ցանկացած երկրի հետ: Ոչ ոք նման իրավունք չունի և չի էլ կարող նման արգելքներ դնել մեզ վրա»:

Ռազմարդյունաբերության ոլորտը՝ պետության ուշադրության կենտրոնում

Հայաստանը միշտ ունեցել է ռազմական արդյունաբերություն, որի նպատակն է բավարարել հայկական բանակի կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների լուծումը: Սակայն ոլորտի նպատակը պետք է լինի նաև լուրջ միջազգային համագործակցության հաստատումը, որի արդյունքում հնարավոր կլինի հայկական արտադրության զինտեխնիկական նաև արտահանել:

Մամվել Հարությունյանն անդրադարձավ կարծիքներին, թե Հայաստանում զենքի արտադրություն չի եղել, իսկ մեր երկիրն ի վիճակի չէ զինտեխնիկա արտադրել: «Մեր երկրում միշտ էլ եղել է զենքի արտադրություն, հետխորհրդային շրջանում, դարաբաղյան պատերազմից հետո ունեցել ենք ձեռնարկություններ, որոնք արտադրել են զենք-զինամթերք: Ավելին, պաշտպանության նախարարությունում ունեցել և այսօր էլ ունենք ռազմարդյունաբերության վարչություն: Այլ հարց է, որ ռազմական արդյունաբերության ոլորտը պետական կառավարման կառույց չի ունեցել, որը կկարողանար համակարգել այս բնագավառը: Բայց այդ խնդիրը նույնպես լուծվել է, քանի որ 2015 թվականի դեկտեմբերի 29-ի կառավարության որոշմամբ ստեղծվել է ռազմական արդյունաբերության կոմիտե, և շուտով կունենանք կոմիտեի նախագահ, ում անունը հայտնի կդառնա հունիսի սկզբին», –ասաց գիտության պետական կոմիտեի նախագահը:

Ստեղծվել է նաև ՀՀ վարչապետին առընթեր ռազմարդյունաբերության խորհուրդ, դրան առընթեր ռազմատեխնիկական գիտական խորհուրդ, որի շրջանակում գործում են մեքենաշինության, քիմիա-կենսաբանության, ֆիզիկատեխնիկական, ինովացիոն, տեղեկատվական անվտանգության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ենթահանձնաժողովները, որոնք զբաղվելու են սպառազինության ոլորտում գիտական մշակումներով: Ս. Հարությունյանի խոսքով, բոլոր այն ծրագրերը, որոնք առնչվում են ռազմական տեխնիկայի ստեղծման, ռազմամթերքների արտադրության հետ, պետք է անպայման անցնեն գիտական փորձաքննություն հանձնաժողովների միջոցով. «Այս ոլորտը պետության ուշադրության կենտրոնում է, և այն պնդումների հետ, թե Հայաստանն ի վիճակի չէ ունենալ ռազմական արդյունաբերություն, ես համաձայն չեմ: ԽՍՀՄ ռազմարդյունաբերության զարգացմանը նպաստել են նաև հայ գիտնականները, որոնց մի մասն աշխատում է նաև այսօր: Ծնվել է նոր սերունդ, որը ևս այս ոլորտում արդեն իսկ ունի որոշակի հաջողություններ, իրականացվում են նույնիսկ արտասահմանյան պատվերներ: Մենք ունենք բարձր որակի մասնագետներ, մեծ մասն ազգությամբ հայ, ովքեր ունեն տարբեր երկրներում ռազմական արդյունաբերության ոլորտում աշխատելու հսկայական փորձ: Նրանք մեր խորհրդատուներն են, որոնց ազգանունները չեմ ցանկանում նշել»:

Ինչ վերաբերում է Հայաստանում ռազմական անօդաչու սարքերի արտադրությանը, բանախոսը նշեց, որ ներկայումս իրականացվում են փորձարկումներ. նման փորձարկումներ իրականացվել են նաև մինչ քառօրյա պատերազմը: Ս. Հարությունյանը շեշտեց՝ Հայաստանն այն եզակի երկրներից է, որն արտադրում է բավականին բարձր որակի անօդաչու թռչող սարքեր:

Արման ԳԱՍՊԱԼՅԱՆ